ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1954 Общественные науки

Հ. Վարդանյան

# ՀԱՅ ՄԱԽԻԱՏՆԵՐԻ ԷՊԻԳՈՆԱԿԱՆ «ԹԵՈՐԻԱՆԵՐԻ» ՌԵԱԿՑԻՈՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսաստանում և Անդրկովկասում 1905—1907 թվականներին սկսված ռևոլյուցիան ժամանակավոր պարտություն կրեց։ Ցարական կառավարությունը, բլոկի մեջ մտնելով բուրժուազիայի հետ, ևս մի քայլ կատարեց ինքնակալությունը բուրժուական մոնարխիզմի վերածելու ուղղությամբ։ Ցարական կառավարությունը կատաղի հարձակում սկսեց բանվորների և գյուղացիների դեմ, անողոք վրեժ լուծելով ռևոլյուցիայի ակտիվ գործող ուժերից։

Ռեակցիայի հարձակումը և հասարակական շարժման անկումը, կազմալուծում ու քայքայում առաջացրին ռևոլյուցիայի ժամանակավոր ուղեկիցների մեջ, որոնցից «...մի մասը գնաց ռևոլյուցիայի բացահայտ թշնամիների բանակը, մյուս մասը բուն դրեց բանվոր դասակարգի անվթար մնացած լեգալ ընկերությունների մեջ և աշխատում էր շեղել պրոլետարիատին ռևոլյուցիոն ուղուց, աշխատում էր վարկաբեկել պրոլետարիատի ռևոլյուցիոն պարտիան։ Ռևոլյուցիայից հեռանալով, ուղեկիցներն աշխատում էին հարմարվել ռեակցիային, համերաշխել ցարիզմի հետ»[1]։

Ռեակցիայի հարձակումը և հասարակական շարժման անկումը կազմալուծում ու քայքայում առաջացրին ռևոլյուցիայի ժամանակավոր ուղեկիցների, առանձնապես՝ բուրժուական և մանր-բուրժուական ինտելիգենցիայի շրջանում, որի մի մասն անցավ ռևոլյուցիայի բացահայտ թշնամիների բանակը։ Անկարող լինելով հասկանալ հասարակական զարգացման օրենքները, նրա զիգզագները, այդ խավերը ցուցաբերեցին հուսալքման ու անկումային տրամադրություններ, իսկ սրա հետևանքով էլ՝ հակում դեպի կրոնը, դեպի միստիկան, որոնք հանդիսանում էին կոնտրռևոլյուցիոն տրամադրությունների արտահայտված մի ձև։

Ցարիզմն ու բուրժուազիան ժողովրդական մասսաների դեմ կռվելիս օգտագործեցին ոչ միայն սևհարյուրյակային ջարդարարներին, այլև տերտերին, օգտագործեցին կրոնը որպես հաշիշ՝ մասսաների դասակարգային գիտակցությունը թունավորելու համար։ «Բոլոր և ամեն տեսակ ճնշող դասակարգերն,— գրում էր Լենինը,— իրենց տիրապետությունը պահպանելու համար երկու սոցիալական ֆունկցիայի կարիք են զգում, դահճի ֆունկցիայի և տերտերի ֆունկցիայի։ Դահիճը պետք է ճնշի կեղեքվածների բողոքն ու վրդովմունքը։ Տերտերը պետք է մխիթարի կեղեքվածներին, նրանց առաջ գծագրի աղետների ու զոհաբերությունների մեղմացման հեռանկարները... և հենց այդ միջոցով հաշտեցնի նրանց այդ տիրապետության հետ, հեռու պահի նրանց ռևոլյուցիոն գործողություններից, խախտի նրանց ռևոլյուցիոն տրամադրությունը, ջախջախի նրանց ռևոլյուցիոն վճռականությունը»[2]։

---

[1] ՀամԿ(բ)Պ պատմություն, Համառոտ դասընթաց, Երևան, 1946, էջ 137—138։
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 286—287։

Կադետական բուրժուազիայի ականավոր գրողների մի խումբ՝ Բերդյաևը, Բուլգակովը, Ստրուվեն և շատ ուրիշներ, 1909 թվականի գարնանը լույս ընծայեցին «Վեխի» ժողովածուն, որը հանդիսանում էր, Լենինի խոսքերով ասած՝ «ռեակցիոն կեղտաջրի» ամբողջական հեղեղ, «լցված դեմոկրատիայի վրա», «լիբերալ ռենեգատության էնցիկլոպեդիա»։ Լիբերալ բուրժուազիայի այդ ռեակցիոն օրգանը բացահայտորեն քարոզում էր միստիկական հայացքներ, կրոնի մեջ էր տեսնում ռևոլյուցիայի դեմ կռվելու իր հոգևոր զենքը։ Բուլգակովը հայտարարում էր, թե «աստվածը բախում է ինտելիգենտական սիրտը»։ Ցարիզմի հետ դաշնակցած բուրժուազիան կոչ էր անում ինտելիգենցիային, «կատարելու ժողովրդական մասսաների հոգևոր ստրկության պահպանման իր «մեծ, սուրբ գործը»[1]։

«Վեխականությունը» հանդիսանում էր ռուսական լիբերալ բուրժուազիայի կոնտրռևոլյուցիոն գաղափարախոսության վառ արտահայտությունը, ժողովրդական մասսաների կողմից կազմակերպված ռևոլյուցիոն պայքարի նկատմամբ նրա ունեցած վախի արտահայտությունը։ Կադետները սողալով և ստորաքարշություն անելով մտրակի ու կախաղանի ցարական կառավարության առաջ, ուղղակի գրում էին, թե հարկավոր է «օրհնել այս իշխանությունը, որը միակն է, որ իր սվիններով ու բանտերով դեռ պաշտպանում է մեզ (այսինքն՝ լիբերալ բուրժուազիային) ժողովրդի կատաղությունից»[2]։

Պետրոգրադում գոյություն ուներ կրոնա-փիլիսոփայական մի ընկերություն, որի հիմնական ու գլխավոր խնդիրն էր՝ պայքար սոցիալիզմի, մարքսիզմի և ժողովրդական մասսաների ռևոլյուցիոն շարժման դեմ, պրոլետարական ռևոլյուցիայի դեմ։ Իդեական ռեակցիայի այդ օջախի շուրջն էին համախմբվել Ս. Բուլգակովը, Դ. Մերեժկովսկին, Զ. Գիպպիուսը և ուրիշներ։ Սրանք հանդիսանում էին աստված որոնողներ։ Լենինը մերկացնում էր այդ աստված որոնողներին, որոնք որոնում էին ինչ-որ «ընդհանուր աստված», «բարոյական իդեալների», «բարու, գեղեցկության և կատարելության» աստված, քարոզում էին «աստծու թագավորությունը երկրի վրա»։

Բերդյաևը հանդես եկավ ընդդեմ «ամեն տեսակի մարդկային ռևոլյուցիայի», հօգուտ կրոնի, որը, նրա կարծիքով, պետք է հանդիսանա մարդու և աստծու դաշինքը։ Մերեժկովսկին հայտարարում էր, որ միայն «կրոնական հասարակությունը կփրկի Ռուսաստանը»։

Մերեժկովսկին, Գիպպիուսը, Վ. Իվանովը և ուրիշ աստված որոնողներ կրոնական ռեակցիոն, միստիկական գաղափարներ էին տարածում նաև գեղարվեստական գրականության միջոցով, քարոզում էին արվեստի միստիկականությունը, աստվածորոնումը չափածո և արձակ գրվածքներում։

Ռեակցիայի ժամանակաշրջանում ինտելիգենցիայի կողմից ցուցաբերված իդեական անկումայնությունը հիանալի կերպով, գեղարվեստորեն բնութագրել է մեր էպոխայի պրոլետարական պոեզիայի խոշորագույն ներկայացուցիչ Վ. Մայակովսկին «Վլադիմիր Իլյիչ Լենին» իր հիասքանչ պոեմում.

«Ռեակցիան դազազում էր։
Ինտելիգենտիկները

[1] Վ. Ի. ԼԵՆԻՆ. Երկեր, հատ. 15, էջ 525։
[2] ՀամԿ(բ)Պ պատմություն, Համառոտ դասընթաց, 1946, էջ 133։

*Թողին ամեն ինչ,*
*Ապականեցին.*
*Տան մեջ փակվեցին,*
*Մոմեր ճարեցին*
*Ու խունկ են ծխում —*
*Աստվածաշինարարները»։*

Իդեական անկումայնությունից զերծ չմնացին նաև բոլշևիկների շարքերում խցկված ինտելիգենտական որոշ ուղեկիցներ, որոնք աշխատում էին բուրժուազիայի ազդեցությունը տարածել պրոլետարիատի վրա։ Մանր-բուրժուական այդ ուղեկիցների թվին էին պատկանում՝ Բոգդանովը, Բազարովը, Ալեքսինսկին, Պոկրովսկին, Լունաչարսկին և ուրիշներ, որոնք նույնպես զբաղվում էին աստվածաշինարարությամբ, նոր կրոնի հորինաբանությամբ, մարքսիզմի ռևիզիայով։

Աստվածաշինարարներին Լենինն անվանում էր աստվածային օտզովիստներ, որոնք «սրմատապես խզում են կապերը մարքսիզմի հիմունքների հետ»[1]։ Լենինն ու Ստալինը բարձր էին պահում բոլշևիկյան պարտիայի մարտական դրոշը, վճռականապես պաշտպանում էին այդ պարտիան՝ բացահայտ ու քողարկված թշնամիների դեմ մղվող անհաշտ պայքարում։ Ի. Վ. Ստալինը գրում է.

«Այսպես կոչված «աստվածաշինարարությունը», որպես գրական հոսանք և ընդհանրապես կրոնական տարրերի ներմուծումը սոցիալիզմի մեջ,—հանդիսանում է մարքսիզմի հիմունքների ոչ գիտական, ուստի և պրոլետարիատի համար վնասակար մեկնաբանման արդյունք։ Բաքվի Կոմիտեն ընդգծում է, որ մարքսիզմը կազմավորվել և մշակվել է որպես որոշ աշխարհայացք ոչ թե շնորհիվ կրոնական տարրերի հետ դաշնակցելու, այլ նրանց դեմ անխնա պայքար մղելու հետևանքով»[2]։

Եթե մինչև 1905—1907 թվականների ռևոլյուցիան մի որոշ ուժով էին առաջադրվում Մարքսի տնտեսական ուսմունքի հարցերը, ռևոլյուցիայի ժամանակաշրջանում առանձին ուժով առաջադրվեց մարքսիստական փիլիսոփայության համար պայքարելու խնդիրը։

XIX դարի վերջին բուրժուական փիլիսոփաների մեջ չափազանց մոդայական երևույթ էր դարձել «Հետ դեպի Կանտը» լոզունգը։ Այդ լոզունգի կողմնակիցները՝ նեոկանտականները, իրենց համարում էին Կանտի հետևորդները։ Բայց նրանք Կանտի ուղղափառ հետևորդներ չէին։ Ինչպես հայտնի է, Կանտի փիլիսոփայությունը էկլեկտիկական-դուալիստական էր. ագնոստիցիզմի-յումիզմի այլատեսակությունը։ Կանտը տատանվում էր մատերիալիզմի և իդեալիզմի միջև, ավելի ու ավելի հակվելով դեպի իդեալիզմը, դեպի իդեալիստական ռեակցիոն հետևությունները։

Նեոկանտականները բոլորովին դեն շպրտեցին Կանտի ուսմունքի պրոգրեսիվ, մատերիալիստական գծերը և կամենում էին վերականգնել նրա փիլիսոփայության ռեակցիոն կողմերը։ Դիալեկտիկական մատերիալիզմին նրանք հակադրում էին խճճված ու անհետևողական իդեալիզմը։

---

[1] Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 15, էջ 372։
[2] Ի. Վ. Ստալին, *Երկեր*, հատ. 2, էջ 197։

Նեոկանտականությունն ընդգրկեց նաև Երկրորդ ինտերնացիոնալի աչքի ընկնող տեսաբաններին։ Նրանցից ոմանք բացե-իբաց հանդես էին գալիս մարքսիստական հայացքները կանտական հայացքներով փոխարինելու օգտին։ Իսկ մյուսները, օրինակ, Կարլ Կաուցկին, նեոկանտականությանը վերաբերվում էին հաշտվողականորեն, պնդելով, թե իբր մարքսիզմը համատեղելի է նաև կանտական հայացքների հետ։

Ռուսաստանում, գրականության մեջ, նեոկանտական հայացքներն ուժեղ կերպով քարոզում էին «լեգալ մարքսիստները»՝ Ստրուվեն, Բուլգակովը։ Լենինն այն ժամանակ գտնվում էր աքսորում։ Բայց նա, որ ուշադրությամբ հետևում էր փիլիսոփայական գրականությանը, հասկացավ նեոկանտականության տարածման վտանգավորությունը բանվորական շարժման համար։ 1898 թվականի սեպտեմբերի 2-ին աքսորից Ա. Պոտրեսովին ուղարկած իր նամակում Լենինը գրում էր, որ իրեն «ծայրահեղորեն զարմացնում է», թե ինչու Պլեխանովը չի արտահայտվել ռուս գրականության մեջ և վճռականորեն չի արտահայտվում նեոկանտականության դեմ։

Լենինն առաջինն էր մարքսիստներից, որ Ստրուվեի և Բուլգակովի դեմ ուղղած իր մի շարք հոդվածներով վճռականորեն հանդես եկավ մարքսիստական փիլիսոփայության նեոկանտական ռևիզիայի դեմ։ Լենինի պայքարը նեոկանտականության դեմ միջազգային նշանակություն ուներ, որովհետև այն ուղղված էր ոչ միայն ռուսական «լեգալ մարքսիստների», այլև Երկրորդ ինտերնացիոնալի ռևիզիոնիստների դեմ։ Լենինը գրում էր, որ «բոլոր քաղքենիական հոսանքները սոցիալ-դեմոկրատիայում մարտնչում են ամենից շատ փիլիսոփայական մատերիալիզմի դեմ, քարշ են տալիս դեպի Կանտը, դեպի նեոկանտականությունը»[1]։

Սրանք մարքսիզմի թեորիական բնագավառի վերասերվածներն էին, որոնք շարունակում էին երկերեսանիորեն իրենց մարքսիստներ անվանել, նպատակ ունենալով խաբել պարտիական շարքային աշխատողներին, մոլորության մեջ գցել նրանց։

Իրականում նրանք միանում էին ռեակցիայի ընդհանուր արշավին՝ ընդդեմ մարքսիզմի, ընդդեմ պարտիայի, ընդդեմ ռևոլյուցիայի։ Նրանցից ոմանք (Լունաչարսկի և ուրիշներ) հասան այն բանին, որ սոցիալիզմը հայտարարեցին կրոնական սիստեմ, կոչ էին անում «մարդկային բարձրագույն պոտենցիաների» աստվածացման, հորինում էին նոր, ավելի նրբին և այդ պատճառով ավելի վտանգավոր կրոն։

Ռեակցիայի տարիներին լույս տեսավ ռևիզիոնիստների գրքերի մի ամբողջ սերիա, այդ թվում՝ Բոգդանովի, Բազարովի, Յուշկևիչի, Լունաչարսկու հոդվածների ժողովածուն՝ «Մարքսիզմի փիլիսոփայության ուրվագծեր» վերնագրով։ Բազարովը հավատացնում էր, թե հավատը արտաքին աշխարհի ռեալականության նկատմամբ միստիկա է։ Բոգդանովը սուբյեկտիվ իդեալիզմ էր քարոզում։ Լունաչարսկին մարդկային բարձրագույն պոտենցիաների աստվածացման կոչ էր անում։ Դա մի ամբողջ արշավանք էր մարքսիստական փիլիսոփայության դեմ, արշավանք, որը քողարկված էր մարքսիզմին հավատարիմ լինելու վերաբերյալ փարիսեցիական հայտարարություններով։ «...Նրանց գիրքը,— գրում էր Լենինը,— անհեթեթ է, վնասակար է, ֆիլիստերական է, տեր-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 9։

տերական է ամբողջապես, սկզբից մինչև վերջը, ճյուղերից մինչև արմատը, մինչև Մախը և Ավենարիուսը»[1]։

1909 թվականին լույս տեսավ Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատությունը, որի մեջ Լենինը անհաշտ ու կրքոտ քննադատության ենթարկեց ու մերկացրեց մարքսիզմի փիլիսոփայության բնագավառի վերասերվածներին։

Հայ իրականության մեջ նույնպես գործում էին մարդիկ, որոնք, հետևելով ռուսական մախիստներին, հանդես էին գալիս մարքսիզմի դեմ։

Այսպես, ռուսական մախիստների օրինակով հայ մախիստները՝ Ե. Ֆրանգյանի բերանով հայտարարում էին, որ իրենց փիլիսոփայությունը հիմնված է գիտության և, հատկապես, բնագիտության նորագույն հայտնագործումների վրա և այն անվանում էին XX դարի բնագիտության փիլիսոփայություն։ Հայ մախիստներից Ե. Ֆրանգյանը, Արշավիր Հովհաննիսյանը, Ե. Կուզեյանը, Սնարը բացարձակապես հայտարարում էին, թե «Մախի փիլիսոփայությունը՝ ներկա բնագիտության փիլիսոփայությունն է այդ»[2]։

Մերկացնելով մախիստներին, որոնք հայտարարում էին, թե Մախի փիլիսոփայությունը ժամանակակից բնագիտության փիլիսոփայություն է, Լենինը գրում էր, որ «Բնագետ Մախի փիլիսոփայությունն այնպես է հարաբերում բնագիտությանը, ինչպես քրիստոնյա Հուդայի համբույրը հարաբերում էր Քրիստոսին»[3]։

Հայ մախիստներից Ե. Կուզեյանն ուղղակի հանդես էր գալիս իդեալիստ ֆիզիկոս-մախիստների դիրքերից՝ ընդդեմ մատերիալիզմի մարքսյան ուսմունքի։

Նա գրում է. «էներգիայի պահպանման օրենքն է XIX դարի բնագիտության այդ խոշոր հայտնագործությունը, որ գալիս է խախտելու մատերիալիզմի հիմքերը...»[4]։

Եթե ֆիզիկայի հասկացողությունը ցույց է տալիս փոփոխականություն, ասում էին «ֆիզիկական» իդեալիստները և հայ մախիստները, ապա այդ փոփոխությունները չեն հանդիսանում մեզանից դուրս գոյություն ունեցող օբյեկտիվ իրականության արտացոլումներ, այլ հանդիսանում են հոգու ազատ ստեղծագործությունները։

Լենինը գիտականորեն ապացուցում էր, որ ֆիզիկայի նոր հայտնագործումները հանդիսանում են ֆիզիկական աշխարհի մասին մեր գիտակցության հետագա ծավալումը, գիտության հետագա հաղթանակը և ապացուցում են մատերիալիզմի ճշտությունը։

Հայ մախիստները ֆիզիկական երևույթները դիտում էին որպես մտային երևույթներ՝ բացասելով նրանց օբյեկտիվ ռեալականությունը և այդ նոր երևույթների հիման վրա հարձակվում էին մատերիալիստների վրա, կամենալով ապացուցել, թե իբր «մատերիան չքացավ»։ «Մատերիան, ըստ Մախի,—գրում էր Կուզեյանը,— մտացածին իր է, մի մտաիր, մտասիմվոլ։ Ավելի գիտական հողի վրա կանգնած կարելի է մատերիան բնորոշել իբրև կոմպլեքս, կապակցություն, զգայությունների մի շարք». (ընդգծումը մերն է—Հ. Վ.)[5]։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 34, էջ 440։
[2] «Գործ» ամսագիր, 1917, № 1, էջ 66—67։
[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 468։
[4] «Միտք», № 1, 1910, էջ 278։
[5] Նույն տեղում, էջ 277։

Հայ մախիստներն իրենց եվրոպական և ռուսական ուսուցիչների հնամաշ գլխարկներով այնքան էին հրապուրվել, որ կամենում էին նրանցից էլ առաջ անցնել մատերիալիզմի, օբյեկտիվ իրականության իրենց բացասմամբ։ Պայքարելով մատերիալիզմի դեմ, պաշտպանելով ու քարոզելով բերկլիական, մախիստական սոլիպսիզմը, Կուզեյանը գրում էր, որ «նա (այսինքն՝ մատերիալիզմը — Հ. Վ.) մոռանում է ամենաէականը. նա մոռանում է, որ օբյեկտը գոյություն ունի սուբյեկտի համար»[1]։

Մախն ու Ավենարիուսը «ֆունկցիոնալ հարաբերության» ներկայացուցիչներն էին, այսինքն՝ նրանք թե՛ ֆիզիկականը և թե՛ հոգեկանը համարում էին իրական, գտնում էին, թե մեկն առանց մյուսի գոյություն չունի, նրանք գոյություն ունեն միասին և այսպիսով ժխտում էին պատճառականության և հետևանքի դիալեկտիկական օրինաչափությունը։ Հայ մախիստ Կուզեյանը հայտարարում էր, որ «... ՟ա ամենաճիշտ տեսակետն է»։[2]։

Հայ մախիստները պաշտպանում էին այն իդեալիստական հայացքը, թե շարժումը հնարավոր է առանց մատերիայի։ «Մատերիալիստները չարաչար սխալվում են,— գրում էր Կուզեյանը,— կարծելով, թե շարժումը բացարձակորեն, անպայման գոյություն ունի։ Շարժումը գոյություն ունի միայն գիտակցության մեջ. նրա գոյությունը պայմանավորվում է մարդու գիտակցության գոյությամբ»[3]։ Կուզեյանը տրամախոսորեն օրինակ է բերում Շոպենհաուերի մոտ «տեղի ունեցած օբյեկտի և սուբյեկտի» խոսակցությունը. նա գրում էր. «Շատ բնորոշ է և հետաքրքրական սուբյեկտի և մատերիայի (կամ օբյեկտի) միջև տեղի ունեցած խոսակցությունը Շոպենհաուերի մոտ, բերված Պաուլզենի կողմից։ Մատերիան ասում է սուբյեկտին՝ «միայն ես կամ, և ինձանից դուրս ոչինչ գոյություն չունի։ Աշխարհն իմ անցողական ձևն է, դու այդ ձևի մի մասի ստվական արդյունքն ես, և բոլորովին պատահական։ Մի քանի վայրկյաններ, և դու այլևս չկաս, բայց ես հավիտյան կամ»։ Սուբյեկտը պատասխանում է մատերիային. «Այս անվերջանալի ժամանակը, որը դու լցնում ես, և անվերջանալի ժամանակը, որին պարտական ես քո հարատևությամբ, իմ պատկերացման մեջ են, և դրա մեջ ես դու ներկայանում ու կաս»[4]։ Ահա հայ բերկլիականը, որի գիտակցությունից դուրս աշխարհը, մատերիան գոյություն չունեն։

Դիալեկտիկական մատերիալիզմը մեր գիտակցության բոլոր սահմանները համարում է մոտավոր, ժամանակավոր, հարաբերական։ Ատոմի, զանգվածի հասկացողությունները, Նյուտոնի օրենքը, չեն հանդիսանում գիտակցության վերջին սահմանները, իրականությունն անվերջ է և, հետևապես, մեր հասկացողությունը նրա մասին լոկ նրա մոտավոր ճիշտ արտացոլումն է։

Ատոմի անսպառության և անվերջ բարդության մասին եղած ուսմունքը հանդիսանում է Լենինի մատերիալիստական կարևոր ընդհանրացումներից մեկը, որը տրված է իր էպոխայի բնագիտության խոր ուսումնասիրության հիման վրա։ Քննադատելով մախիստներին, Լենինն ապացուցում էր, որ ժամանակակից դիտական մատերալիզմը բոլորովին չի պնդում մասսայի կամ զանգվածի անփոփոխության վրա։

---

[1] «Միտք», էջ 275։

[2] Նույն տեղում, էջ 286։

[3] Նույն տեղում, էջ 282։

[4] Նույն տեղում, էջ 276։

Լենինը մերկացրեց «ֆիզիկական» իդեալիզմը նաև մի այլ հարցում։ Ինչպես հայտնի է, XIX դարում արդեն ապացուցված էր էներգիայի պահպանման ու փոխակերպման ֆունդամենտալ օրենքը։ Նույն դարի սկզբում էներգիայի հասկացողությունը դիտվում էր իբրև բնագիտության հիմնական օրենքներից մեկը։ Բնության բոլոր պրոցեսները դիտվում էին իբրև էներգիայի փոխակերպում մի ձևից մյուսին։

Էներգիայի մեխանիստական, իդեալիստական կոնցեպցիայով հանդես եկավ խոշոր քիմիկոս փիլիսոփա Օստվալդը։ Նա գտնում էր, «Որ բոլոր արտաքին երևույթները կարող են պատկերվել որպես էներգիաների միջև տեղի ունեցող պրոցեսներ, այդ հանգամանքն ամենից հասարակ կերպով բացատրել կարելի է նրանով, որ հենց մեր գիտակցության պրոցեսներն իրենք հանդիսանում են էներգետիկական և իրենց այդպիսի հատկությունը հաղորդում են (aufpragen) բոլոր արտաքին փորձերին»։ «Սա զուտ իդեալիզմ է. ո՛չ թե մեր միտքն է արտացոլում էներգիայի փոխարկումն արտաքին աշխարհում, այլ արտաքին աշխարհն է արտացոլում մեր գիտակցության «հատկությունը»[1]։

Հայ մախիստները պաշտպանում էին Օստվալդի իդեալիզմը։ «Բնափիլիսոփա Օստվալդը, էներգիայի հիմնադիրը, բնորոշում է «մատերիան» իբրև էներգիայի մի ձև, նա գտնվում է էներգիայի ձևի մեջ»[2],— գրում էր Կուզեյանը։ Նա գտնում էր, որ XIX դարի բնագիտության խոշոր նվաճումը հանդիսացող էներգիայի պահպանման օրենքը «գալիս է խախտելու մատերիալիզմի հիմքերը»[3]։

Քննադատելով ու մերկացնելով էներգիայի հարցում Օստվալդի, Բոգդանովի իդեալիստական հայացքները, Լենինը գրում էր.

«Էներգետիկ ֆիզիկան՝ շարժումն առանց մատերիայի մտածելու իդեալիստական նոր փորձերի աղբյուր է, որոնց առիթն էր մատերիայի մինչ այդ անտարրալուծելի համարված մասնիկների տարրալուծումը և մատերիական շարժման մինչ այդ չտեսնված ձևերի հայտնագործումը»[4]։

Իմացության մատերիալիստական թեորիան, որը տարերայնորեն ընդունվում էր նախկին ֆիզիկայի կողմից, «ֆիզիկական» իդեալիստների կողմից, XIX դարի վերջում փոխարինվեց իդեալիստական և ագնոստիկական թեորիայով, որից օգտվեցին ֆիդեիստները։ Նրանք չէին ուզում ընդունել, որ բնագիտության կամ ֆիզիկայի նորագույն հայտնագործումները հարցը լուծում էին հօգուտ մատերիալիզմի, որովհետև մատերիայի հասկացողությունն իմացաբանորեն նշանակում է օբյեկտիվ ռեալականություն, որը գոյություն ունի մարդկային գիտակցությունից անկախ և արտապատկերվում է նրա կողմից։ Բուրժուական ֆիզիկան ապրում էր լուրջ ճգնաժամ, որը բացատրվում է միաժամանակ նրանով, որ ֆիզիկոսները չգիտեին դիալեկտիկան»։

«Այն փիլիսոփայական նոր տեսակետը, որի հիմնավորումն է այսօր գերմանական հողի վրա «էմպիրիոկրիտիցիզմի» անվամբ,— գրում էր Արշ. Հովհաննիսյանը,— անազդեցիկ չէր կարող մնալ նաև մարքսիստական փիլիսոփայական դրույթների նկատմամբ։ Էմպիրիոմոնիստական ուղղությունն է, որ ծայր է տվել այսօր ռուս երիտասարդ մարքսիստների շրջանում, օրեցոր նվա-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 361։
2 «Միտք», էջ 277։
3 Նույն տեղում, էջ 288։
4 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 364։

ձումներ է անում»[1]։ Հովհաննիսյանը կշտամբում էր մարքսիստներին այն բանի համար, որ նրանք հանդես են գալիս ընդդեմ Բոգդանովի «էմպիրիոմոնիզմի» և Լունաչարսկու «Կրոնը և սոցիալիզմը» աշխատությունների։ Մարքսիզմի կլասիկները բազմիցս մատնանշել են սոցիալիզմի ու կրոնի անհաշտելիությունը։ Նրանք միշտ էլ աշխատավոր մասսաներին համոզել են, որ կրոնը ոչ մի առնչություն չունի գիտության հետ, որ կրոնը գիտության թշնամին է, որ կրոնը «ժողովրդի հաշիշն է։ Կրոնը հոգևոր օղու մի տեսակն է, որի մեջ կապիտալի ստրուկները խեղդում են իրենց մարդկային պատկերը, փոքրիշատե մարդավայել կյանքի իրենց պահանջը»[2]։

Անհաշտ պայքար ծավալելով մախիստների դեմ, Լենինը գիտականորեն ապացուցեց և ցույց տվեց իդեալիզմի ու կրոնի կապը, որ իդեալիզմը նրբացած տերտերականություն է, որ իդեալիզմը ճանապարհ է դեպի տերտերականությունը։

Լենինը ցույց տվեց, որ մախիզմը (էմպիրիոկրիտիցիզմը) հիմք ծառայեց Լունաչարսկու, Բոգդանովի և մյուսների աստվածաշինարարությանը։ «էմպիրիոկրիտիցիզմի օբյեկտիվ, դասակարգային դերն ամբողջովին հանգում է ֆիդեիստներին սպասարկելուն այն պայքարում, որ մղում են նրանք ընդհանրապես մատերիալիզմի և մասնավորապես պատմական մատերիալիզմի դեմ»։

Մարքսիստական փիլիսոփայությունը, որպես բոլշևիկյան պարտիայի գիտական աշխարհայացք, անհաշտելի է որևէ իդեալիստական և կրոնական հայացքի հետ։

Մարքսիստական փիլիսոփայությունը հիմք է վերցնում, առաջնային է համարում մատերիան, իբրև մեր կամքից անկախ և մեր գիտակցությունից դուրս օբյեկտիվ ռեալականություն։ Մարքսիզմը ժխտում է տերտերական հեքիաթները՝ աշխարհն աստծու կողմից ստեղծված լինելու մասին։ Նա ընդունում է, որ աշխարհն իր էությամբ նյութական է, որ աշխարհի բազմապիսի երևույթները շարժվող մատերիայի օրինաչափություններն են, որ նա իր զարգացման ընթացքում որևէ արարչի՝ աստծու կամ «բացարձակ իդեայի», «համաշխարհային ոգու» կարիք չունի։

Հանդես գալով մարքսյան փիլիսոփայական մատերիալիզմի դեմ, և պաշտպանելով Մախի ու Ավենարիուսի սուբյեկտիվ իդեալիզմը, Ե. Ֆրանգյանը գրում էր. «Իր ուսմունքում Մախը լուծում է մի հավիտենական պրոբլեմ՝ առաջնության պրոբլեմը։ Ո՞րն է առաջնայինը՝ նյութակա՞նը, թե՞ հոգեկանը։ Այս հարցը ահա նրա տարրերի վարդապետության մեջ ստանում է ինքնատիպ լուծում»[3] (ընդգծումը Ֆրանգյանինն է — Հ. Վ.)։ Ֆրանգյանը գտնում էր, որ Մախն ու Ավենարիուսը լուծել են փիլիսոփայության հիմնական հարցը, կեցության և գիտակցության փոխհարաբերության հարցը։ Պաշտպանելով Մախի այն թեզը, թե ֆիզիկական և հոգեկան տարրերը գոյություն ունեն միասին, որ մեկն առանց մյուսի գոյություն չունի, Ֆրանգյանը գրում է, որ «ֆիզիկականն ու հոգեկանը հավասարարժեք են և հավասարապես իրական։ Նրանցից մեկը մյուսից չի ծագում և ոչ էլ մեկը մյուսից ավելի կամ պակաս զորավոր է»[4]։ Ուրեմն, նյութական աշխարհն առաջնային չէ, հոգեկանի պատճառը չէ, որ

[1] «Միտք», էջ 176։
[2] Վ. Ի. ԼԵՆԻՆ, Երկեր, հատ. 10, էջ 93։
[3] «Գործ», № 1, էջ 69։
[4] Նույն տեղում, էջ 73։

նրանք համասարազոր են։ Ելնելով իր սուբյեկտիվ իդեալիստական կոնցեպցիայից, որը քողարկվում է էկլեկտիզմով, Ֆրանգյանը մեղադրում էր ռուս մարքսիստներին այն բանի համար, թե նրանք Մախի դեմ ուղղված իրենց կշտամբանքներում ճիշտ չեն եղել։ «Նրա փիլիսոփայական դրույթների վերլուծումը ցայտուն կերպով ցույց է տալիս,—գրում էր Ֆրանգյանը,—թե որքան անարդար են և թյուր հայացք ունեն Մախի իմացաբանության մասին այն մարդիկ, որոնք նրան տալիս են հետևյալ բազմազան, միմյանց ջնջող որակումները՝ իդեալիստ, սոլիպսիստ, մատերիալիստ, բերկլիստ և այլն»[1]։

Հայ մախիստները ժխտում էին ճանաչողության դիալեկտիկ-մատերիալիստական թեորիան, որի ելակետային դրույթն այն է, որ մատերիան, բնությունը, կեցությունը, ֆիզիկականն առաջնային է, իսկ գիտակցությունը, հոգեկանը՝ երկրորդայինը ածանցված նյութականից, և պաշտպանում էին էմպիրիոկրիտիցիզմի ճանաչողության իդեալիստական թեորիան, որն զգայական աշխարհից է մեկնում դեպի նյութական աշխարհը, որը բացասում է պատճառի ու հետևանքի օրինաչափությունը։ «Մերժելով, ուրեմն, բացարձակ մնայունը,— գրում էր Ֆրանգյանը,— Մախն ընդունում է հարաբերական հաստատումը։ Նա ճանաչում է հատկապես տարրերի կապակցությունների, մշտական հարաբերությունների կայունությունը։ Մախի համաշխարհային տարրերը ենթակա չեն «բացարձակ հոսման»։ Ըստ Մախի, հենց տարրերի այս բազմապիսի, համեմատական հաստատուն հարաբերությունների հետազոտությունը կազմում է բնագիտության, ինչպես և ամեն մի գիտության առարկան»[2]։

Ֆրանգյանը միաժամանակ պաշտպանում էր Ավենարիուսի «սկզբունքային կոորդինացիայի» իդեալիստական թեորիան և գտնում էր, թե Ավենարիուսը դրանով խոշոր դեր է խաղացել գիտության հետագա զարգացման համար։ Լենինը «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության մեջ բացահայտեց և մահացու հարված հասցրեց ոչ միայն Մախի բերկլիական, սուբյեկտիվ իդեալիստական հայացքներին, այլև Ավենարիուսի «սկզբունքային կոորդինացիայի» թեորիային, ըստ որի ես-ի և միջավայրի հարաբերակցական շղկապի մեջ կենտրոնական անդամը համարվում է ես-ը։

Ֆրանգյանն իր եվրոպական ուսուցիչ Ավենարիուսի նման, ժխտում էր մարդկային ուղեղի՝ որպես մատերիայի զարգացման բարձր աստիճանի դերը։ Չէր ընդունում այն ճշմարտությունը, որ ուղեղը մտածողության օրգան է, իսկ մտածողությունը՝ ուղեղի ֆունկցիան, պաշտպանում էր անուղեղ փիլիսոփայությունը։

«... Ուղեղը,— գրում էր Ֆրանգյանը,— մտածողության ոչ արդյունքն է կամ կայանը, ոչ օրգանը կամ գործիքը, ոչ կրողը կամ սուբստրատը. մտածողությունը, մյուս կողմից, ուղեղի ոչ բնակիչն է կամ հրամանատարը, ոչ մյուս կեսը կամ կողմը, ոչ արդասիքը կամ միայն մի դրությունը»[3]։

Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը ճանաչում է պատճառականության և հետևանքի օրինաչափությունը։ Նա ընդունում է, որ մատերիան է բոլոր փոփոխությունների սուբյեկտը։ Իրենց ռուսական և եվրոպական ուսուցիչների օրինակով հայ մախիստները ժխտում էին պատճառականության

---

[1] «Գործ», էջ 79։
[2] Նույն տեղում, էջ 70
[3] «Գործ», էջ 71։

օրենքը։ «Մախն ու Ավենարիուսը,— գրում էր Ֆրանգյանը,— պատճառականության օրենքին մահացու հարված տվին... Այս նոր ուսմունքը (խոսքն էմպիրիոկրիտիցիզմին է վերաբերում — Հ. Վ.) նախ և առաջ չի ճանաչում... ֆիզիկական և հոգեկան տարրերի պատճառաբանության կապը. չկա պատճառ և հետևանք»[1]։

Հայ մախիստները ռուս մախիստների նման, հավաստիացնում էին, թե Մախի և Ավենարիուսի փիլիսոփայությունը հանում է մատերիալիզմը և իդեալիզմը միակողմանիությունից։ Մախիստները հիմք էին վերցնում փորձը, որի տակ նրանք հասկանում էին զգայությունները, որոնք գոյություն ունեն (ըստ մախիստների) առանց մատերիայի և առանց ուղեղի։ Մախիստները պնդում էին, թե ֆիզիկական բնությունը մարդկային փորձի ածանցյալն է։ Մարքսիստական փիլիսոփայությունը պնդում է, որ բնությունը գոյություն է ունեցել մինչև փորձը, մինչև մարդկանց գիտակցությունը և մինչև մարդկանց երևան գալը։ «Մատերիան առաջնայինն է,— գրում էր Լենինը,— միտքը, գիտակցությունը, զգայությունը՝ շատ բարձր զարգացման արդյունք։ Ահա իմացության մատերիալիստական թեորիան, որի վրա տարերայնորեն կանգնած է բնագիտությունը»[2]։ Մախիստ Արշ. Հովհաննիսյանը, պաշտպանելով իմացաբանական էմպիրիոկրիտիկների հայացքները, գտնում էր, որ բնության մեջ չկա պատճառ և հետևանք, որ նրանք նույնական հասկացողություններ են, որ հոգեկանն ու ֆիզիկականը նույնական են, որը «գոյություն ունի իմացական և սոցիալական փորձի մեջ... ֆիզիկական աշխարհը՝ դա սոցիալապես միավորված փորձերի աշխարհն է, իսկ հոգեկան աշխարհը հատկապես կազմակերպված փորձի աշխարհն է»[3]։

Հայ մախիստները Բոգդանովի «էմպիրիոմոնիզմը» համարում էին որպես փիլիսոփայության «առաջադեմ» ուղղություն, որ իբր թե «զարգանում է բնական գիտությունների նորագույն մեթոդների տվյալների հիման վրա» մի կողմից և «փիլիսոփայական կրիտիկայի նորագույն ձևակերպումների վրա՝ մյուս կողմից»[4]։ Ըստ մախիստ Հովհաննիսյանի, Բոգդանովն է, որը կարողացել է որոշել նոր ուղղության՝ էմպիրիոմոնիզմի հիմքերը, տալ նոր ուղղության առավելությունները նախորդ փիլիսոփայական տեսակետների հանդեպ և հատկապես՝ մատերիալիստական մոնիզմի նկատմամբ։ «էմպիրիոմոնիզմը, ինչպես հայտնի է,— գրում էր Հովհաննիսյանը,— արտահայտվել է Մախի և Ավենարիուսի գրվածքներով, հենց ինքը տերմինը Ավենարիուսինն է, և այսօր էմպիրիոմոնիզմն է, որ ավելի ևս կողմնակիցներ է դրավում երիտասարդ գիտնականների և փիլիսոփաների շրջանում և կամաց-կամաց ազդեցություն և առաջնություն գրավելու շանսեր ունի գիտական ու փիլիսոփայական մեթոդի մեջ»[5]։

Ֆրանգյանը նույնպես աշխարհը համարում էր զգայությունների կոմպլեքս, կանգնած էր փորձի իդեալիստական ըմբռնողության դիրքերում, ժխտում էր զգայությունների գիտական հիմքը՝ մատերիան, գտնելով, որ Մախն իր վարդապետությամբ «լուծել» է առաջնության պրոբլեմը, թե առաջնայինը, սկզբնականը ո՛չ մատերիան է և ո՛չ էլ հոգեկանը, այլ տարրերը։

1 «Գործ», էջ 80—81։
2 Վ. Ի. ԼԵՆԻՆ, Երկեր, հատ. 14, էջ 63։
3 «Միտք», էջ 180—181։
4 Նույն տեղում, էջ 279։
5 Նույն տեղում։

Լենինն իրավացիորեն նկատում էր, որ «Մախի և Ավենարիուսի քննվող ուսմունքի մեջ ոչինչ այլ բան չկա, բացի սուբյեկտիվ իդեալիզմի վերաշարադրանքից»[1]։

Մախիստներն իրենց ռեակցիոն հայացքները սքողում էին ամեն տեսակ փիլիսոփայական խարդախություններով, ձգտելով կոծկել մատերիայի և մտածողության հարաբերության հարցը։ «Ներկայումս,— գրում էր Լենինը,—ամեն երանգի պրոֆեսորական փիլիսոփայություն իր ռեակցիոնությունն զգեստավորում է «փորձին» նվիրված դեկլամացիայի հագուստով»[2]։ Մատերիալիստական փիլիսոփայությունը պնդում էր, որ ֆիզիկական աշխարհն ազդելով մեր զգայարանների վրա, առաջ է բերում մեր մեջ զգայություններ։ Մարդը քաղցի զգայություն է ունենում այն ժամանակ, երբ նա ուտել է կամենում։ Համր մարդը չի կարող ունենալ այս կամ այն ձայնի զգայությունը, մանկությունից կույր մարդը չի կարող ունենալ այս կամ այն գույնի զգայությունը, որովհետև այս կամ այն գույնի զգայությունն առաջանում է ֆիզիկական աշխարհի կողմից աչքի ցանցաթաղանթի վրա ունեցած ներգործության հետևանքով։ Այսպես է մեզ ուսուցանում բնագիտությունը։ Եթերի որոշ երկայնության և որոշ արագության ալիքները, ներգործելով ցանցաթաղանթի վրա, մարդու մեջ առաջ են բերում այս կամ այն գույնի զգայություն։ «Այս կամ այն գույնի տարբեր զգայությունները,— գրում էր Լենինը,— նա (բնագիտությունը — Հ. Վ.) բացատրում է լույսի ալիքների տարբեր երկարությամբ, որ գոյություն ունեն մարդկային ցանցաթաղանթից դուրս, մարդուց դուրս և նրանից անկախ։ Սա է հենց մատերիալիզմը. ներգործելով մեր զգայարանների վրա, մատերիան առաջ է բերում զգայություն։ Զգայությունը կախված է ուղեղից, ներվերից, ցանցաթաղանթից և այլն, այսինքն՝ որոշ կերպով կազմակերպված մատերիայից։ Մատերիայի գոյությունը կախում չունի զգայությունից։ Մատերիան է առաջնայինը։ Զգայությունը, միտքը, գիտակցությունը բարձրագույն պրոդուկտն են հատուկ կերպով կազմակերպված մատերիայի։ Այս են ընդհանրապես մատերիալիզմի և մասնավորապես Մարքսի—Էնգելսի հայացքները»[3]։

Փիլիսոփայական մատերիալիզմը պնդում է, որ կենդանի էակների սոցիալապես կազմակերպված փորձը ածանցված է ֆիզիկական բնությունից, հանդիսանում է նրա երկարատև զարգացման արդյունքը, որովհետև, երբ առաջացել, զարգացել է ֆիզիկական բնությունը, այն ժամանակ չկային ու չէին կարող լինել ո՛չ սոցիալականությունը, ո՛չ կազմակերպվածությունը, ո՛չ փորձը և ո՛չ էլ կենդանի էակները։

Հայ մախիստները պաշտպանում և պրոպագանդա էին անում Բոգդանովի էմպիրիոմոնիզմի ռեակցիոն, հակագիտական, իդեալիստական գաղափարները։ «... Էմպիրիոմոնիզմը, — գրում էր Հովհաննիսյանը, — ժամանակակից մտածելակերպից ամենից գիտական հիմքի վրա է կառուցում իր փիլիսոփայական շենքը՝ փորձի վրա։ Ինչպես էլ որ նա կազմվի ապագայում, համենայն դեպս, մեր կարծիքով, ավելի գիտական, հիմնավորված և մեծարժեք է լինելու, քան ինչ-որ ներկայացնում էր իրենից մարքսիստական-մատերիալիստական մտածելակերպը»[4]։

---

1 Վ. Ի. ԼԵՆԻՆ, Երկեր, հատ. 14, էջ 76։
2 Նույն տեղում, էջ 188—189։
3 Նույն տեղում, էջ 57—58։
4 «Միտք», էջ 199։

Հայ բուրժուազիայի գաղափարախոս Հովհաննիսյանն ուրիշ կերպ էլ չէր կարող արտահայտել իր ատելությունը դեպի մարքսիզմը, քան էմպիրիոմոնիզմի տերտերական հայացքների պաշտպանությամբ։

Լենինը գիտականորեն ապացուցեց, որ Բոգդանովի էմպիրիոմոնիզմը հենց մի ճանապարհ է դեպի տերտերականություն։ Էմպիրիոմոնիզմի բոգդանովյան փիլիսոփայության ելակետը հանդիսանում է տարրերի քաոսը, իսկ տարրեր ասելով, մախիստները Մախի նման հասկանում էին մարդուց և մարդկությունից կտրված զգայությունները։ Լենինը պնդում էր, որ Բոգդանովի մոտ զգայությունները մեռած իդեալիստական աբստրակցիա են, որովհետև նա վերցնում էր զգայությունները ոչ թե որպես արտաքին աշխարհի պատկերներ, այլ որպես օբյեկտիվ իրականությունից անկախ տարրեր։ Բոգդանովը չէր ընդունում գոյություն ունեցող արտաքին աշխարհը զգայություններից ու գիտակցությունից անկախ, նա չէր ընդունում այն ճշմարտությունը, որ արտապատկերումը չի կարող տեղի ունենալ առանց արտապատկերվողի, իսկ արտապատկերվողը գոյություն ունի արտապատկերողից միանգամայն անկախ։ Մարքսիստական փիլիսոփայությունը զգայությունները, մտապատկերները, հասկացողությունները, ընդունելով իբրև օբյեկտիվ ռեալականության արտացոլում, դրանով իսկ դուռը փակում է ամեն տեսակի տերտերականության համար։

Մախիստները, բացասելով զգայությունների, իբրև օբյեկտիվ աշխարհի արտացոլումը, դրանով իսկ բացասում էին օբյեկտիվ ճշմարտությունը, բացասում էին բնության և հասարակության զարգացման օրինաչափությունները, արտաքսում էին գիտությունից ամեն մի օրենք և օրինաչափություն, ջնջում էին հավատի և գիտության տարբերությունը։ Ռուսական մախիստ Բոգդանովը գտնում էր, որ օբյեկտիվ ճշմարտություն գոյություն չունի, որ «ճշմարտությունն իդեոլոգիական ձև է՝ մարդկային փորձի կազմակերպող ձև»։ Եթե ճշմարտությունը մարդկային փորձի ձև է, հետևապես չի կարող մարդկությունից անկախ ճշմարտություն լինել, չի կարող օբյեկտիվ ճշմարտություն լինել։ Մախիստները չէին ուզում հասկանալ, որ ֆիզիկական աշխարհը գոյություն է ունեցել, գոյություն ունի և գոյություն կունենա մարդկությունից և մարդկային փորձից անկախ, որ ֆիզիկական աշխարհը գոյություն է ունեցել այն ժամանակ, երբ չէր կարող լինել ոչ մի «սոցիալականություն» և ոչ մի «կազմակերպում» մարդկային փորձի։ «Օբյեկտիվ ճշմարտության բացասումը Բոգդանովի կողմից,— գրում էր Լենինը,—ագնոստիցիզմ է և սուբյեկտիվիզմ» [1]։

Լենինը խստիվ կերպով մերկացնում էր բոլոր նրանց, ովքեր փորձում էին արտաքսել օրենքները գիտությունից, մերկացնում էր դրա դասակարգային բուրժուական իմաստն ու էությունը։ «Օրենքների վտարումը գիտությունից,— գրում էր Լենինը,— իրականում սոսկ հանդիսանում է կրոնի օրենքների ներխցկում» [2]։ Փիլիսոփայության հիմնական հարցը, մտածողության և կեցության փոխհարաբերության հարցը, ունի, ինչպես ասում է Էնգելսը, նաև մի ուրիշ կողմ, այն է՝ գիտակցությունն արդյոք ի վիճակի՞ է ճանաչելու օբյեկտիվ նյութական աշխարհը, համապատասխա՞ն է արդյոք մարդու գիտակցությունը օբյեկտիվ ճշմարտության, թե՞ արտաքին աշխարհն անճանաչելի է և միշտ մարդու համար մնում է մի կողմ կանգնած, իբրև «ինքն իրը»։ Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմն ուղղակի ու վճռականորեն պատասխա-

1 Վ. Ի. ԼԵՆԻՆ, Երկեր, հատ. 14, էջ 152։
2 Վ. Ի. ԼԵՆԻՆ, Երկեր, հատ. 20, էջ 244։

նում է, որ «աշխարհը և նրա օրինաչափությունները միանգամայն ճանաչելի են, որ բնության օրենքների վերաբերյալ մեր գիտելիքները... օբյեկտիվ ճշմարտությունների նշանակություն ունեցող գիտելիքներ են»[1]։ Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը գտնում է, որ չկա ոչ մի սկզբունքային սահման, որը կարողանար բաժանել մարդու գիտակցությունը բնությունից։ Մեր զգայությունները, պատկերացումները, հասկացողությունները, ըմբռնումները տալիս են մեզ արտաքին աշխարհի ճիշտ արտացոլումը, նրանք իրենց մեջ պարունակում են օբյեկտիվ ճշմարտություններ։ Քննադատելով ու մերկացնելով Մախի կողմնակիցներին՝ մեղադրելով նրանց ֆիդեիզմի մեջ, և ապացուցելով, որ բնության մեջ գտնվող օրինաչափությունների վերաբերյալ մեր գիտական գիտելիքները ստույգ են, որ գիտության օրենքներն օբյեկտիվ ճշմարտություն են հանդիսանում, Լենինը գրում էր. «Արդի ֆիդեիզմն ամենևին չի մերժում գիտությունը. նա միայն մերժում է գիտության «չափազանց հավակնությունները», այն է՝ օբյեկտիվ ճշմարտության հավակնությունը։ Եթե օբյեկտիվ ճշմարտություն գոյություն ունի (ինչպես մատերիալիստներն են կարծում), եթե մարդու «փորձի» մեջ արտացոլելով արտաքին աշխարհը՝ բնագիտությունն է միայն ընդունակ մեզ տալու օբյեկտիվ ճշմարտություն, ապա անպայման մերժվում է ամեն մի ֆիդեիզմ»[2]։ Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմն, ընդունելով օբյեկտիվ ճշմարտությունը, գտնում է, որ նրա օբյեկտիվ կրիտերիումը հանդիսանում է ռևոլյուցիոն պրակտիկան։ Պրակտիկան ընդունելով իբրև ճշմարտության հիմնական կրիտերիում, մարքսիզմը սրանով մերժում է ամեն մի տերտերականություն։

Մերկացնելով մախիստների ագնոստիկական հայացքները, Լենինը գրում էր. «Իմացաբանության մեջ, ինչպես և գիտության բոլոր մյուս բնագավառներում, անհրաժեշտ է դիալեկտիկորեն դատել, այսինքն՝ մեր իմացությունը չենթադրել պատրաստ ու անփոփոխ, այլ քննել, թե ի՛նչ կերպ է չգիտությունից երևան գալիս գիտությունը, ի՛նչ կերպ է ոչ լիակատար, անճշգրիտ գիտությունը դառնում ավելի լիակատար և ավելի ճշգրիտ»[3]։

Բուրժուական փիլիսոփայության իդեալիստական-ագնոստիկական եզրակացությունները լայն տարածում գտան նաև սոցիոլոգիայի բնագավառում։ Բուրժուական սոցիոլոգները, ինչպես նաև հայ մախիստները, բացասում էին (և բացասում են ներկայումս կապիտալիստական երկրների բուրժուական սոցիոլոգները) հասարակության պատմության օրենքների ճանաչելիության հնարավորությունը։ Մախիստ Ֆրանգյանը, Հենրիխ Ռիկկերտի, Միխայլովսկու և մյուսների նման պնդում էր, որ պատմության նկատմամբ օրենքի հասկացողություն չի կարող լինել, քանի որ պատմության մեջ դեպքերը չեն կրկնվում, բացարձակ են։ «Հնարավո՞ր է արդյոք «օրենքը» նույն այս հասկացողությամբ կիրառել և պատմության ընթացքի վրա։ Անտարակույս՝ ո՛չ.... Պատմության դեպքերը երբեք չեն կրկնվում նույնությամբ, իր բոլոր մանրամասնություններով»[4]։

Ստացվում է այն, որ, ասենք, կապիտալիստական կարգերը չպետք է փոխվեն սոցիալիստական կարգերի, չպետք է վերացվի կապիտալիստական ստոր-

[1] ՀամԿ(բ)Պ պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 134։
[2] Վ. Ի. ԼԵՆԻՆ, Երկեր, հատ. 14, էջ 155։
[3] Նույն տեղում, էջ 124։
[4] «Միտք», էջ 24—25։

կական շահագործման օրենքը։ Այդ նույնն ասում էր նաև անգլիական բուրժուական սոցիոլոգ Հենրիխ Ռիկկերտը, որը պնդում էր, թե հասարակության զարգացման մեջ ոչ մի օբյեկտիվ օրինաչափություն չկա, որ «պատմական զարգացման հասկացողությունը և օրենքի հասկացողությունը փոխադարձաբար բացասում են մեկը մյուսին»։ Դրա համար էլ բուրժուական սոցիոլոգների տեսակետով գիտություն հասարակության մասին, հասարակության պատմության մասին անհնարին է։

Մարքսը, հայտնագործելով հասարակության զարգացման օրենքները, հասարակության կյանքի նյութական պայմանների արտադրության եղանակը, իբրև հասարակության զարգացման բաղիս, ցույց տվեց, որ հասարակության պատմության մասին եղած գիտությունը նույնպիսի ճշմարիտ գիտություն է, ինչպիսին հանդիսանում են՝ ֆիզիկան, քիմիան, բիոլոգիան և այլն։ Մարքսի և Էնգելսի տեսական ու պրակտիկ եզրակացությունը հասարակության օրինաչափության ճանաչողությունից՝ հանդիսանում է գիտական սոցիալիզմը։

Հասարակության զարգացման օրենքների գիտենալը բանվոր դասակարգի պարտիային հնարավորություն է տալիս զարգացման զիգզագների ընթացքում ճիշտ կողմնորոշվել, ճիշտ հասկանալ հասարական երևույթների բարդությունը, տեսնել դեպքերի ճիշտ ընթացքը և իմանալ «ոչ միայն այն, թե ինչպես և դեպի ուր են շարժվում դասակարգերը ներկայումս, այլև այն, թե ինչպես և դեպի ուր պետք է շարժվեն նրանք ամենամոտ ապագայում»[1]։ Իբրև օրինակ այն բանի, թե ինչպես բոլշևիկների պարտիան իր պրակտիկ գործունեության մեջ ղեկավարվել է հասարակության զարգացման օրենքների իմացությամբ, հանդիսանում է մի երկրում սոցիալիզմի հաղթանակի լենինյան թեորիան։ Լենինն այդ եզրակացության հանգեց ոչ պատահականորեն, այլ կապիտալիզմի զարգացման տնտեսական ու քաղաքական անհավասարաչափության ու թռիչքաձևության օրենքի հայտնագործումով։

Լենինյան այդ հանճարեղ եզրակացությունը, որը հանդիսացավ մեր պարտիայի պրակտիկ գործունեության ծրագիրը, ցույց է տալիս այն, թե ինչպես պարտիայի պրակտիկ գործունեությունը բխում է հասարակության զարգացման օրենքների իմացությունից, թե ինչպես այդ իմացությունը վեր է ածվում գիտական կանխատեսման, գործողության ուղեցույցի և այլն։

Հայ մախիստները Մախի և Ավենարիուսի էմպիրիոկրիտիցիզմի զինանոցի զենքերով պայքար սկսեցին նաև պատմական մատերիալիզմի մարքսյան «մոնիզմի» դեմ, պատմական մատերիալիզմի մարքսյան ուսմունքի դեմ։ Մատերիալիստական փիլիսոփայությունը կազմում է Մարքսի հասարակական-պատմական տեսության հիմքը, ըստ որի ոչ թե մարդկանց գիտակցությունն է որոշում նրանց կեցությունը, այլ, ընդհակառակը, նրանց հասարակական կեցությունն է որոշում գիտակցությունը։ Ինչպես մարդու իմացողությունն արտացոլում է նրանից անկախ գոյություն ունեցող մատերիան, այնպես էլ մարդու հասարակական իմացողությունը, այսինքն՝ փիլիսոփայական, կրոնական, քաղաքական և այլ հայացքներն ու ուսմունքները հասարակական-տնտեսական կազմըն են արտացոլում։ Քաղաքական հիմնարկները վերնաշենք են հանդիսանում տնտեսական հիմքի վրա։ Հենց սա է կազմում պատմական մատերիալիզմի մոնիզմը։ Բայց Մարքսն ամենևին կանգ չառավ XVIII դարի ֆրանսիական մա-

[1] Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, 1937, էջ 23։

տերիալիզմի վրա, որը, Էնգելսի խոսքերով ասած, մեխանիկական էր, մետաֆիզիկական, այսինքն՝ հակադիալեկտիկական էր, ներքևից՝ մատերիալիստական, վերևից՝ իդեալիստական։ «Կարծիքներն են կառավարում աշխարհը»,— այս էր նրանց սոցիոլոգիական դևիզը։ Մարքսը, ընդհակառակը, առաջ մղեց փիլիսոփայությունը, դուրս քշեց իդեալիզմը պատմությունից, վերջ տվեց բնության և մարդկային պատմության դուալիստական ըմբռնողությանը, կատարեց ռևոլյուցիոն հեղաշրջում գիտության մեջ։

Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը ավարտված փիլիսոփայական մատերիալիզմ է այն իմաստով, որ նա թե՛ բնության և թե՛ հասարակության բոլոր երևույթները բացատրեց մատերիալիստորեն։ Մարքսը ցույց տվեց, որ հասարակության նյութական կյանքը, նրա կեցությունն առաջնային է, իսկ նրա հոգևոր կյանքը՝ երկրորդային, ածանցական։ Մարքսը ցույց տվեց, որ հասարակության հոգևոր կյանքի ձևավորման աղբյուրը, հասարակական իդեաների, թեորիաների, քաղաքական հայացքների, քաղաքական հիմնարկների ծագման աղբյուրը պետք է փնտրել հասարակության նյութական պայմանների, հասարակության կեցության մեջ։ Մարքսի պատմական մատերիալիզմի թեորիան ծառայել և ծառայում է Սովետական Միության Կոմունիստական պարտիայի և եղբայրական կոմունիստական պարտիաների թեորիական ու պրակտիկ գործունեության հիմքը։

Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը պրոլետարիատի հոգևոր զենքն է՝ կապիտալիստական կարգերը ռևոլյուցիոն ճանապարհով կոմունիստական կարգերի վերափոխելու համար, ուստի նա չի կարող դուր գալ վարձու ստրկության պաշտպանության հոգևոր զինանոց հանդիսացող իդեալիզմի քարոզիչներին։

Ռուսական և հայկական մախիստները ժխտում էին մարքսիզմը որպես գիտական թեորիա։ «Եթե այսօր մարքսիստական պատմա-փիլիսոփայությունը,— գրում էր Ա. Հովհաննիսյանը,— այնքան ուժգնորեն տատանվում է գիտական հարվածների ուժով նույնիսկ ռուսական անհամբեր շրջաններում, այդ արդեն լավագույն փաստն է այն կարծիքի դեմ, որ, իբր թե, մարքսիզմը մի գիտական թեորիա էր հատկապես սոցիոլոգիայի բնագավառում»[1]։ Իսկ ո՞րն էր այն «գիտությունը», որի հարվածների տակ «տատանվում էր» մարքսիզմը։ Այդ «գիտությունը» Մախի և Ավենարիուսի իդեալիստական ռեակցիոն փիլիսոփայությունն էր, Բոգդանովի էմպիրիոմոնիզմը։

Հայ մախիստները Մարքսի ուսմունքը մեղադրում էին «տնտեսական մատերիալիզմի մեջ», այն բանի մեջ, որ, իբր թե, մարքսիզմը անհոգի է դեպի իդեաները, գաղափարները, թեորիաները։ Նրանք բացահայտ կերպով զրպարտում էին մարքսիզմին։ Մարքսիզմը թեորիայի ու պրակտիկայի դիալեկտիկական միասնություն է։ Մարքսը դեռ իր երիտասարդ հասակում, երբ նոր էր մշակում գիտական կոմունիզմի ուսմունքը, գտնում էր, որ «...Ինչպես փիլիսոփայությունն իր նյութական զենքը գտնում է պրոլետարիատի մեջ, այնպես էլ պրոլետարիատն իր հոգևոր զենքը գտնում է փիլիսոփայության մեջ»[2]։

Մարքսիզմի կլասիկներն անհաշտ պայքար են մղել Ֆոխտի, Մոլեշոտի, Բյուխների, էկոնոմիստների և այլ տիպի վուլգար մատերիալիստների դեմ,

[1] «Միտք», էջ 203։
[2] Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Երկեր, հատ. 1, էջ 398։

որոնք անտեսում էին իդեաների, գաղափարների, թեորիաների և քաղաքական հիմնարկների դերն ու նշանակությունը, հասարակության նյութական պայմանների զարգացման, պատմության զարգացման գործում։ Մարքսիզմը ոչ միայն չի բացասում, այլև մարդկային հասարակության պատմության մեջ խոշոր տեղ է տալիս առաջավոր գաղափարներին, թեորիաներին։

Հասարակական գիտակցությունը, հասարակական իդեաները, թեորիաները լինում են տարբեր։ Լինում են հին, իրենց դարն ապրած իդեաներ, թեորիաներ, որոնք արդեն ռեակցիոն են, կաշկանդում են հասարակության զարգացումը, նրա առաջխաղացումը, ինչպես, օրինակ, բուրժուական գաղափարախոսությունը, բուրժուական ֆաշիստական սոցիոլոգիան Ամերիկայում, Անգլիայում, Ֆրանսիայում, որոնք ծառայում են ռեակցիոն ուժերին։ Դրան հակառակ, լինում են ռևոլյուցիոն իդեաներ, գաղափարներ, որոնք լուսավորում են հասարակության տնտեսական ու քաղաքական զարգացման ուղիները, հեշտացնում են հասարակության առաջխաղացումը, հանդիսանում են ռևոլյուցիոնականացնող, մոբիլիզացնող, ձևափոխող ու կազմակերպող գործոններ։ Առանց այդպիսի ռևոլյուցիոն թեորիայի չի կարող լինել ակտիվ ներգործություն հասարակության նյութական կյանքի զարգացման վրա։ Այդ թեորիան մարքսիզմ-լենինիզմի ռևոլյուցիոն թեորիան է։

Մարքսիզմ-լենինիզմն անողոք է բոլոր նրանց նկատմամբ, ովքեր բացասել կամ բացասում են առաջավոր գաղափարների, թեորիաների դերը պատմության զարգացման գործում, ովքեր փորձել կամ փորձում են թեորիան անջատել պրակտիկայից։ Իդեաների ռեալականության վերացման կոնկրետ օրինակ կարող է ծառայել գիտական սոցիալիզմի մարքս-լենինյան թեորիան, որը մեր սոցիալիստական մեծ Հայրենիքում ռեալականություն է դարձել։

Ի՞նչ ենք հասկանում հասարակության նյութական կյանքի պայմաններ կամ կեցություն ասելով, որոնք որոշում են հասարակության ֆիզիոնոմիան, նրա իդեաները, հայացքները, քաղաքական հիմնարկները։ Այդ՝ հասարակության արտադրության եղանակն է, ապրուստի միջոցներ հայթայթելու եղանակը։ Արտադրության եղանակը բաղկացած է արտադրողական ուժերից և արտադրական հարաբերություններից։ Արտադրության եղանակը կազմում է բազիսը, իսկ գաղափարները, հայացքները, թեորիաները, քաղաքական հիմնարկները, կրոնը, փիլիսոփայությունը և այլն կազմում են վերնաշենքը։ Արտադրողական ուժերը, որպես հասարակության զարգացման ամենառևոլյուցիոն տարրը, կազմում են բովանդակությունը, իսկ արտադրական հարաբերությունները, որոնք լինում են շահագործումից զերծ, կոլեկտիվ կամ շահագործողական-դասակարգային, հանդիսանում են ձևը։ Այս երկուսն էլ գտնվում են դիալեկտիկական միասնության մեջ, պետք է համապատասխանեն միմյանց։ Այն դեպքում, երբ արտադրական հարաբերությունները չեն համապատասխանում արտադրողական ուժերի զարգացման մակարդակին, կաշկանդում են արտադրողական ուժերի զարգացումը, այն ժամանակ առաջ են գալիս սոցիալական ռևոլյուցիաներ, որոնք հենց հանդիսանում են պատմության զարգացման օրենքը, հասարակական մի ֆորմացիան փոխարինում են մի նոր, ավելի պրոգրեսիվ ֆորմացիայի, որի համապատասխան էլ փոխվում են մարդկային գաղափարները, հայացքները, իդեաները, թեորիաները, քաղաքական հիմնարկները, մի խոսքով՝ ամբողջ վերնաշենքը։ Մարքսը ցույց տվեց, որ կապիտալիստական արտադրական հարաբերությունները, հասարակության

արտադրողական ուժերի զարգացմանը նպաստելուց, դարձել են նրա արգելակները, և հետևապես, ինչպես ասում էր Մարքսը, հնչում է մասնավոր սեփականության ժամը, ունեզրկողները պետք է ունեզրկվեն՝ պրոլետարական ռևոլյուցիայի միջոցով։ Պրոլետարիատն իր առաջավոր կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ տապալելով բուրժուազիային, սեփականազրկելով նրան, հաստատում է իր դիկտատուրան, որը միջոց կլինի դասակարգերի վերացման և կոմունիստական կարգերի կառուցման համար։ Այս է պատմական մատերիալիզմի մարքսյան թեորիայի ռևոլյուցիոն իմաստն ու էությունը։

Արշ. Հովհաննիսյանը, խոսելով հասարակության պատմության շարժիչ ուժերի մասին, առարկելով պատմական մատերիալիզմի մարքսյան ուսմունքին և պաշտպանելով պատմության նկատմամբ էմպիրիոկրիտիցիզմի իմացաբանության ռեակցիոն թեորիան, գրում էր, որ «իդեոլոգիական պրոցեսն է, որ կազմակերպում է կյանքի «տնտեսական պրոցեսը», ավելի շատ ներդաշնակության մեջ դնելով այն և նորա արդյունքները համեմատաբար օգտակար դարձնելով հասարակության համար»[1]։ Ուրեմն, ըստ Հովհաննիսյանի, ոչ թե հասարակության նյութական կյանքն է որոշիչ նրա իդեաների, գաղափարների ու թեորիաների, այլ վերջիններն են որոշիչը հասարակության նյութական կյանքի զարգացման։ Սա սուբյեկտիվ իդեալիզմ է, որն արտահայտվում է սոցիոլոգիայի բնագավառում։

Մենք արդեն ցույց ենք տվել, որ ըստ Մախի ֆիզիկական և հոգեկան տարրերը գոյություն ունեն միասին, իսկ Ավենարիուսի սկզբունքային կոորդինացիայի թեորիան պնդում էր, որ ես-ը և միջավայրը գտնվում են հարաբերակցական շաղկապի մեջ, ըստ որում կենտրոնական անդամը հանդիսանում է ես-ը, իսկ միջավայրը՝ հականդամ։ Ֆրանգյանը պաշտպանում է այդ իմացաբանական էմպիրիոկրիտիցիզմի ռեակցիոն թեորիան։

Ի՞նչով էր հիմնավորում Ֆրանգյանն իր իդեալիստական աշխարհայացքը։ Նա այդ փորձում էր «հիմնավորել» ֆունկցիոնալ հարաբերության սկզբունքով։ «Այդ սկզբունքը,— գրում էր նա,— չի ընդունում երկու շարքերի միջև եղած պատճառի և հետևանքի ակտը. նա ճանաչում և շեշտում է միմիայն նրանց, ինչպես և առհասարակ երևույթների միջև ֆունկցիոնալ հարաբերությունը, իրենց ունեցած ֆունկցիոնալ կախումը. եթե փոխվում է Ա-ն, անպայմանորեն փոխվում է նաև Բ-ն, և, ընդհակառակը, Բ-ի փոփոխությունը Ա-ի փոփոխության մի ֆունկցիան է, և ընդհակառակը»[2]։ Այստեղ, ինչպես ընթերցողը պարզ կնկատի, Ֆրանգյանը բացարձակապես ժխտում է մատերիայի, բնության, կեցության առաջնությունը և նույնական է համարում կեցությունն ու գիտակցությունը։

Բոլոր մախիստներն էլ բացասում էին պատմական մատերիալիզմի այն ճշմարտությունը, որ հասարակական գիտակցությունն արտացոլում է հասարակական կեցությունը։ Մախիստ Բոգդանովը, ռևիզիայի ենթարկելով պատմական մատերիալիզմի մարքսյան մոնիզմը, գտնում էր, որ «Հասարակական կեցությունն ու հասարակական գիտակցությունը, այս բառերի ճշգրիտ իմաստով, նույնական են» (ընդգծումը Բոգդանովինն է — Հ. Վ.)։

---

[1] «Միտք», էջ 191։

[2] Նույն տեղում, էջ 84։

Մերկացնելով Բոգդանովի իդեալիստական հայացքները, Լենինը ցույց էր տալիս, որ «հասարակական կեցությունն ու հասարակական գիտակցությունը նույնական չեն,— ճիշտ այնպես, ինչպես նույնական չեն առհասարակ կեցությունն ու առհասարակ գիտակցությունը»[1]։

Ինչպես գիտենք, Մարքսի պատմական մատերիալիզմի կարևորագույն դրույթներից մեկն էլ այն է, որ մարդիկ իրենց կյանքի նյութական պայմաններն արտադրելիս, անկախ իրենց կամքից ու գիտակցությունից, մտնում են միմյանց հետ որոշ կապերի ու հարաբերությունների մեջ, որոնց Մարքսն արտադրական հարաբերություններ է անվանում։ Մարդկային հասարակության նյութական հիմքը հանդիսանում է «մարդկային ամեն մի համակեցության համար հիմնական իրողությունը՝ ապրուստի միջոցներ հայթայթելու եղանակը...» (Լենին), այսինքն՝ նյութական բարիքների արտադրության եղանակը։ Հասարակության նյութական կյանքը հանդիսանում է օբյեկտիվ ռեալականություն, որ գոյություն ունի մարդկանց գիտակցությունից դուրս, նրանց կամքից անկախ։

Արտադրողական ուժերի զարգացումից են կախված այն հարաբերությունները, որոնց մեջ մտնում են մարդիկ իրար նկատմամբ՝ մարդկային պահանջները բավարարելու համար, անհրաժեշտ առարկաների արտադրության ժամանակ։ «Իրենց կյանքի հասարակական արտադրության ժամանակ,— գրում է Մարքսը,— մարդիկ մտնում են որոշ, անհրաժեշտ, իրենց կամքից անկախ հարաբերությունների՝ արտադրական հարաբերությունների մեջ, որոնք համապատասխանում են նրանց նյութական արտադրողական ուժերի զարգացման որոշ աստիճանին»[2]։

Մախիստ Բոգդանովը, ռևիզիայի ենթարկելով Մարքսի ուսմունքը, գրում էր, թե «Գոյության համար մղվող իրենց կռվում մարդիկ չեն կարող միավորվել այլ կերպ, քան գիտակցության օգնությամբ. առանց գիտակցության չկա հաղորդակցություն։ Ըստ Բոգդանովի և մյուս մախիստների, ստացվում է այն, որ նախնադարյան-տոհմատիրական հասարակարգում մարդիկ, գազաններին դեմ չդառնալու և իրենց ապրուստի միջոցներ հայթայթելու համար միատեղ աշխատանք էին կատարում ոչ թե կյանքի նյութական պայմանների թելադրանքով, այլ գիտակցության օգնությամբ։

Բոգդանովին հետևեցին նաև հայ մախիստները։ «Մեր անալիզին ուշադրությամբ հետևած ընթերցողն արդեն իսկ կեզրակացնի,— գրում էր Հովհաննիսյանը,— որ թե սոցիոլոգիական, և թե իդեոլոգիական պրոցեսները սոցիալական կյանքում միևնույն կարևոր, հավասարարժեք, էական... դերն ունեն կատարելու և այսպիսով, ուրեմն, հասարակական կյանքի զարգացման պատճառներն ըստ մարքսիստական պատմագրության, դասավորել գլխավոր և երկրորդական պատճառների, զանազան հիմնաշենքեր և վերնաշենքեր կառուցել, այդ արդեն հակառակ կլիներ այն պատմական մոնիստական տեսակետին, որը ձևակերպում է Բոգդանովը»[3]։

Հայ մախիստները, ինչպես և բոլոր մյուս մախիստները պաշտպանում ու քարոզում էին իդեալիստական-կրոնական, բուրժուական ռեակցիոն բարոյա-

---

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 14, էջ 432։
[2] Կ. Մարքս. Ընտիր երկեր, հատ. 1, էջ 401—402, Ք. Դ. Պ. Հ., Երևան, 1941։
[3] «Միտք», էջ 197։

կանություն, հանդես էին գալիս բարոյականության մարքսիստական ըմբռնողության դեմ, ժխտում էին բարոյականության դասակարգային էությունն ու իմաստը, քարոզում էին աստվածային, հավիտենական, ապադասակարգային բարոյականություն։ «Բարոյականության օրենքն, ուրեմն, մեր գիտակցության մեջ է,— գրում էր Սնարը,— անկախ փորձառություններ... այդ օրենքը յուր ամբողջության մեջ ուրիշ բան չէ, քան ն-պատակների մի բացարձակ ամբողջական կարգավորում բանականության թելադրած նորմերի համեմատ և նրա ազդեցության տակ։ Դա չի ճանաչում ոչ մի բացառություն» [1]։ Այսպես, ուրեմն, ըստ Սնարի բարոյականությունը բանականության արդյունք է, հավիտենական է, անփոփոխ։

Մարքսը և Էնգելսը, հայտնագործելով հասարակական կյանքի զարգացման օրենքը՝ պատմական մատերիալիզմի թեորիան, դրանով իսկ բացահայտեցին բարոյականության դասակարգային բնույթն ու էությունը։ Նրանք ցույց տվին, որ բարոյականությունը մարդկային հասարակության նյութական կյանքի հոգևոր կողմերից մեկն է, սերտորեն կապված է արտադրական հարաբերությունների տիպից և փոխվում է՝ այդ հարաբերությունների փոփոխման հետ միասին։ Նրանք ցույց տվին, որ բարոյականությունն արդյունք է հասարակական, տնտեսական ու քաղաքական հարաբերությունների, նա ծագում ու փոփոխվում է արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների փոփոխման հետ միասին։ Բացարձակ, ապադասակարգային բարոյականություն գոյություն չունի դասակարգային հասարակության մեջ, որքան որ գոյություն չունի հասարակության տնտեսական սառած կյանք։

Երբ մարդկային հասարակությունը պառակտվել և վեր է ածվել թշնամական դասակարգերի՝ շահագործողների և շահագործվողների, հենց այն ժամանակվանից էլ բարոյականությունը դասակարգային բարոյականություն է եղել։ Անտագոնիստական դասակարգերին համապատասխան է նաև անտագոնիստական բարոյականություն, որի պայմաններումն էլ հող է ստեղծվում համամարդկային բարոյականության հաղթանակի համար։ «Իսկական մարդկային բարոյականություն հնարավոր կլինի հասարակական զարգացման միայն այն աստիճանի վրա,— գրում էր Էնգելսը — երբ դասակարգը ոչ միայն ոչնչացված կլինի, այլև գործնական կյանքում ամեն մի հիշողություն նրա մասին իսպառ ջնջված» [2]։

Յուրաքանչյուր հասարակություն ունեցել է և ունի իր բարոյականության նորմաները, որոնք տարբերվում են միմյանցից։ Բարոյականության պարտադիր նորմաների հիմքը ոչ թե պետք է որոնել բանականության մեջ, այլ տնտեսական և դասակարգային շահերի մեջ։ Մերկացնելով Դյուրինգին, հետևապես բոլոր գույնի իդեալիստներին, որոնք բարոյականությունը համարում էին ընդմիշտ, անփոփոխ, աստվածային, հավիտենական, Էնգելսը ցույց է տալիս, որ բարոյականության մասին եղած տեսությունները ամեն մի տվյալ ժամանակի տնտեսական վիճակի արդյունք են հանդիսանում»։ «Իսկ քանի որ հասարակությունը մինչև այժմ զարգացել է դասակարգային հակադրությունների մեջ, ապա բարոյականությունն էլ միշտ դասակարգային բարոյականություն է եղել։ Այն կամ արդարացրել է տիրող դասակարգի իշխանությունն ու շահերը, կամ թե, երբ ճնշված դասակարգը բավականաչափ ուժեղացել է, արտահայտել

[1] «Միտք», էջ 240։

[2] Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, Պետհրատ, Երևան, 1952, էջ 121։

է նրա ըմբոստությունն այդ տիրապետության դեմ և ներկայացրել է ճնշվածների ապագա շահերը»[1]։

Էնգելսը, բարոյականության հարցում քննադատելով Դյուրինգի մետաֆիզիկական, իդեալիստական հայացքները, ցույց է տալիս, որ բուրժուական հասարակության հետ ծնունդ առած պրոլետարիատն ունի իր բարոյականությունը, որ քրիստոնեական, ֆեոդալական, բուրժուական բարոյականության համեմատությամբ «ամենից շատ տևականություն խոստացող տարրեր է պարունակում այն բարոյականությունը, որն այժմ արդեն հանդես է գալիս հանուն ներկա կարգերի տապալման, պաշտպանում է ապագան, հետևաբար՝ պրոլետարական բարոյականությունը»[2]։

Բուրժուական բարոյականությունը, որը բուրժուական հասարակարգում տիրապետող է հանդիսանում, սերտորեն կապված է կապիտալիստական արտադրական հարաբերությունների հետ և արդարացնում ու օրինականացնում է մարդու շահագործումը մարդու ձեռքով։ Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը ժխտում է մարդկային, դասակարգային հասկացողությունից դուրս եղած ամեն մի բարոյականություն, որը ծառայել և ծառայում է բուրժուազիայի շահերի պաշտպանությանը։

Այս նշանակում է, որ բարոյականությունը դասակարգային է և հանդիսանում է այդ դասակարգային արտադրական հարաբերություններն արտացոլող իդեոլոգիական ձևերից մեկը։

Ստրկատիրական հասարակարգում ստրկատիրոջ կողմից ստրուկին շահագործելը, նրան ֆիզիկապես ոչնչացնելը համարվում էր բարոյական գործ։ Կալվածատերերի կողմից ճորտ գյուղացիներին շահագործելը, նրանց իրավազրկության մեջ պահելը դիտվել է որպես բարոյական գործ։ Բուրժուական հասարակարգում պրոլետարիատի շահագործումը դիտվել է և դիտվում է նույնպես բարոյական գործ։ Մարքսիզմն այդ բոլորը համարում է անբարոյականություն, շահագործողների բարոյականություն, որը նպատակ է ունեցել և նպատակ ունի պաշտպանել ունևոր դասակարգերի շահերը, պաշտպանել նրանց տիրապետությունը։ «Հին հասարակությունը,— ասում էր Լենինը,— հիմնված է այն սկզբունքի վրա, որ կամ դու ես կողոպտում ուրիշին, կամ ուրիշը՝ քեզ, կամ դու ես ուրիշի համար աշխատում, կամ ուրիշը՝ քեզ համար, կամ դու ստրկատեր ես, կամ ինքդ ստրուկ ես»[3]։

Պրոլետարական բարոյականությունը, որը ձևակերպվում է հենց բուրժուական հասարակության ծոցում, ծառայել և ծառայում է բանվոր դասակարգի և աշխատավորների տնտեսական ու քաղաքական ազատագրմանը։ Միմիայն այն հասարակարգում են պայմաններ ստեղծվում համամարդկային բարոյականության համար, որտեղ վերացված են անտագոնիստական դասակարգերը, ինչպես, օրինակ, Սովետական Միությունում և ժողովրդա-դեմոկրատական երկրներում։ Կոմունիզմի հաղթանակը բերում է համամարդկային բարոյականություն։ «Կոմունիստական բարոյականության հիմքն է կազմում կոմունիզմն ամրապնդելու և ավարտելու պայքարը»[4],— ասում էր Լենինը։ Կոմունիստական բարոյականությունը եղել և մնում է կոմունիստների պարտիայի իդեա-

[1] Ֆ. Էնգելս. Անտի-Դյուրինգ, Պետհրատ, Երևան, 1952, էջ 121։

[2] Նույն տեղում, էջ 110։

[3] Վ. Ի. ԼԵՆԻՆ. Երկեր, հատ. 31, էջ 358։

[4] Նույն տեղում, էջ 359—360։

կան հզոր զենքն աշխատավորներին դաստիարակելու, կազմակերպելու համար այն պայքարում, որ նրանք մղել և մղում են կոմունիզմի կառուցման համար։

Իրենց սոցիոլոգիական էքսկուրսիաներում հայ մախիստները զրպարտում էին մարքսիզմին այն բանի համար, որ իբր թե «Մարքսիզմը անհատին նշանակություն չունեցող մեծություն է հայտարարում», որ իբր թե մարքսիզմը «ժխտում է անհատի դերը պատմության մեջ»։ Մախիստները փաստորեն կանգնած էին ինդետերմինիզմի տեսակետի վրա, պնդում էին, թե մարդու կամքը բացարձակ ազատ է, գերագնահատում էին անհատի դերը պատմության մեջ, բացասում էին բոլոր դեպքերի ու երևույթների անհրաժեշտ կապակցության և պատճառական պայմանավորվածության մասին եղած ուսմունքը, դետերմինիզմին հակադրում էին ինդետերմինիզմը, որը պնդում է, թե իրերի բնական ընթացքն աշխարհում ենթակա չէ օրինաչափության, պատճառականության և պաշտպանում է կամքի ազատությունը։

Հայ մախիստները, սոցիոլոգիայի բնագավառում կիրառելով Ավենարիուսի սկզբունքային կոորդինացիայի իդեալիստական թեորիան, ժխտում էին պատճառականության և անհրաժեշտության օրինաչափությունը. ժխտում էին դետերմինիզմը։ Առարկելով դետերմինիզմին և իբր թե նաև ինդետերմինիզմին, Ի. Կուզեյանը գրում էր, որ «երկուսն էլ ծայրահեղ տեսակետներ են և չեն համապատասխանում իրականությանը»[1]

Կուզեյանի օրինակով Ե. Ֆրանգյանը գրում էր, որ «Մահմմեդը և Քրիստոսը... իբրև անհատներ և կրոնի հիմնադիրներ, վճռական դեր են խաղացել պատմության զարգացման ընթացքի մեջ»[2]։

Մարքսիստական փիլիսոփայությունը, ընդունելով անհրաժեշտությունը բնության և պատմության մեջ, չժխտելով պատահականությունների դերը, որոնք հանդիսանում են օբյեկտիվ պատճառականության կապակցությունների արտահայտման ձև, չի ժխտում նաև մարդկային կամքի հարաբերական ազատությունը և պահանջում է մարդու ակտիվ, գործոն մասնակցությունը իրադարձությունների ընթացքի մեջ։ Մարքսիզմի փիլիսոփայությունը մերժում է կամքի ազատությունը և ընդունում է, որ մարդու կամքը պատճառական անհրաժեշտությամբ պայմանավորված է։ Մարքսիստական փիլիսոփայությունը պնդում է, որ անհատի ազատությունը պայմանավորված է ժողովրդի ազատությամբ և ոչ թե հակառակը։

Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմի տեսակետով ազատությունը ոչ թե բնության և հասարակության օրենքներից դուրս առերևույթ անկախության մեջ է, այլ այդ օրենքների իմացության մեջ, պրակտիկ գործունեության ու նրանցից օգտվելու հնարավորության մեջ։

Բուրժուական սոցիոլոգները, պատմության նկատմամբ ունենալով սուբյեկտիվ իդեալիստական հայացք, պատմություն ասելով հասկացել և հասկանում են իբրև մեծ անձնավորությունների գիտակցական գործունեության արդյունք, ժխտում են պատմական օրինաչափությունները, ժխտում են ժողովրդի, մասսաների դերը պատմության մեջ։ Նարոդնիկները, ինչպես հայտնի է, գտնում էին, թե պատմությունն ստեղծում են «քննադատորեն մտածող» ինտելիգենտները կամ «քաջ հերոսները»։ Այստեղից էլ առաջ է գալիս «ակտիվ հերոս-

1 «Միտք», էջ 287։
3 Նույն տեղում, էջ 70—71։

ների» և «պասիվ ամբոխի» նարոդնիկական հակագիտական թեորիան։ Ըստ սուբյեկտիվ սոցիոլոգների, պատմության զարգացումը պայմանավորված է առանձին հերոսների գործողություններով և նրանց իդեաներով։ Սա իդեալիզմ է։ Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը պնդում է, որ հասարակության զարգացումը որոշվում է ոչ թե աչքի ընկնող անհատների ցանկություններով ու իդեաներով, այլ հասարակության գոյության նյութական պայմանների զարգացմամբ, արտադրության եղանակների և նյութական բարիքների արտադրության բնագավառում դասակարգային հարաբերությունների փոփոխություններով, այդ դասակարգերի միջև տեղի ունեցող պայքարով։

Մարդկային հասարակության պատմության զարգացման ամբողջ ընթացքը ցույց է տվել, որ մեծ անձնավորությունները կարող են վերածվել ոչնչության, եթե նրանց գործողությունները, իդեաներն ու ցանկությունները հակառակ են գնում հասարակության տնտեսական զարգացմանը, հակառակ են գնում առաջավոր դասակարգի պահանջներին։ Մարքսիզմը չի ժխտել և չի ժխտում անհատի դերը, և այն էլ խոշոր դերը պատմության մեջ, նա անհատի դերը «զրոյի չի հավասարեցնում», ինչպես պնդում էին հայ մախիստներից՝ Ֆրանգյանը, Կուզեյանը և մյուսները։ Մարքսիզմը պնդում է, որ աչքի ընկնող մեծ անձնավորություններ կարող են լինել, իրոք, մեծ անձնավորություններ, եթե նրանց իդեաներն ու ցանկությունները ճիշտ են արտահայտում հասարակության տնտեսական զարգացման և առաջավոր դասակարգի պահանջմունքները, եթե նրանք ի վիճակի են հասկանալու, թե ինչպես այդ պայմանները փոխել դեպի լավը։

Հայ մախիստները ժխտում էին աշխատավոր մասսաների, ժողովուրդների և դասակարգերի դերը պատմության մեջ։ Եվ պատմության կերտողները, պատմության առաջ մղող ուժերը համարում էին մեծ անձնավորություններին։ «Կան պատմագիրներ և սոցիոլոգ-փիլիսոփաներ,— գրում էր Ֆրանգյանը,— որոնք բացասում են անհատի դերը պատմության մեջ և շեշտում են միմիայն մասսայի նշանակությունը, դարձնելով այն իբրև առաջ մղիչ գործոն պատմական էվոլյուցիայի, առհասարակ սոցիալական-քաղաքական զարգացման։ Արդեն ես առիթ եմ ունեցել նման մտածողների անունները հիշատակելու, ինչպես Բոքլը, Կոնտը, Մարքսը և այլն։ Մտածողների այս շարքի հանդեպ կան այնպիսի դեմքեր, նույնքան հեղինակավոր և խոշոր, որոնք, ընդհակառակը, ճանաչում են անհատի «մեծ մարդկանց» դերը պատմական պրոցեսի մեջ և մերժում միանգամայն մասսայի ու շրջապատի նշանակությունը... Առաջին տեսակետը, որը բացասում է անհատի դերը, միակողմանի է, անգամ սխալ»[1]։ Մարքսիստները մերկացրել և մերկացնում են նաև նրանց, ովքեր ժխտում են պատմության օրինաչափ զարգացումը, ովքեր մարդկանց դերը հավասարեցնում են զրոյի և մարդուն դիտում են որպես կույր անհրաժեշտություն, անիմանալի ճակատագրի գործիք։ Պատմության նման կոնցեպցիան վուլգար մատերիալիստների կոնցեպցիան է։ Վուլգար մատերիալիստները, էկոնոմիստները, մենշևիկները բացասում էին սուբյեկտիվ ֆակտորների՝ պարտիայի, առաջավոր իդեայի դերը, պարտիայի և առաջնորդների ակտիվ, գործոն դերը պատմության զարգացման գործում։ Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմն ուսուցանում է, որ մարդիկ իրենք են կերտում իրենց պատմությունը, որ

[1] «Միտք», էջ 69—70։

պատմական անհրաժեշտության իդեան ամենևին չի բացասում անհատի դերը պատմության մեջ, բայց պատմության ընթացքը որոշվում է հասարակության նյութական կյանքի պայմաններով։ Միայն պրոլետարական ռևոլյուցիան և սոցիալիզմի հաղթանակն են հնարավորություն ստեղծում մարդկային անձնավորության աննախընթաց բարգավաճման, մարդկանց ունակությունների բազմակողմանի զարգացման համար, որի փայլուն օրինակն է հանդիսանում սովետական հասարակարգը։

Մախիստները հանդես էին գալիս մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմի դեմ նաև նրա համար, որ նա խորապես տոգորված էր պարտիականությամբ, և գիտության ու փիլիսոփայության մեջ իրենց համարում էին անպարտիականներ։ Այո, մարքսիզմի փիլիսոփայությունն, իրոք, որ պարտիական է, ինչպես և պարտիական էին փիլիսոփայության մեջ մախիստները, որոնք պաշտպանում էին բուրժուազիայի շահերը։ Փիլիսոփայական հարցերի նկատմամբ մեր համառոտակի էքսկուրսիան ցույց է տալիս, որ իմացաբանական հիմնական հարցում եղած պայքարը եղել է մատերիալիզմի և իդեալիզմի պայքար, երկու պարտիաների՝ պրոլետարական և բուրժուական պարտիաների պայքարը ժամանակակից հասարակության մեջ։ Մարքսը և էնգելսը, Լենինն ու Ստալինը սկզբից ևեթ պարտիական են եղել փիլիսոփայության մեջ։ Մարքսն ու էնգելսը «կարողանում էին հայտնաբերել շեղումները մատերիալիզմից և գիջողականությունն իդեալիզմի ու ֆիդեիզմի վերաբերմամբ բոլոր և ամեն տեսակ «նորագույն» ուղղությունների մեջ»[1]։

Մարքսն ու էնգելսը պարզորոշ ու ճշտորեն իրենց մատերիալիզմը հակադրել են հեգելյան ամենազարգացած ու հետևողական իդեալիզմին, քննադատել ու մերկացրել են Բյուխներին, Լանգեին, Դյուրինգին և մյուսներին, որոնք չէին հասկանում Հեգելի դիալեկտիկայի պրոգրեսիվ կողմը և Լենինի խոսքերով ասած՝ վաննայի ջրի հետ միասին դուրս էին նետում նաև մանուկին, չէին հասկանում, որ հեգելյան դիալեկտիկան մարգարիտ է, որը ընկած էր իդեալիստական գոմաղբի մեջ, այս բանը չհասկացավ նաև մատերիալիստ Լ. Ֆոյերբախը։ Այս բանը հիանալի կերպով հասկացան Մարքսն ու էնգելսը, որոնք հանեցին իդեալիստական գոմաղբից հեգելյան մարգարիտը՝ դիալեկտիկան, ուսմունքը զարգացման մասին, միացրին այն ֆոյերբախյան մատերիալիզմի հետ, դեն գցելով ֆոյերբախյան մատերիալիզմի կրոնական-էթիկական-իդեալիստական կողմը և ստեղծեցին դիալեկտիկ-մատերիալիստական թեորիա, պրոլետարիատի ու նրա պարտիայի հոգևոր զենքը, գոյություն ունեցող բուրժուական կարգերը ռևոլյուցիոն ճանապարհով կոմունիստական կարգերի փոխարինելու ուսմունքը։

Մարքսի և էնգելսի ոգով ու հետևողականությամբ Լենինն ու Ստալինը իմպերիալիզմի և պրոլետարական ռևոլյուցիայի դարաշրջանի՝ պրոլետարիատի դասակարգային պայքարի փոփոխված իրադրություններին համապատասխան զարգացրին, նոր աստիճանի բարձրացրին փիլիսոփայության պարտիականության մասին Մարքսի և էնգելսի թեորիան։ Լենինն ու Ստալինն իրենց բազմաթիվ գիտական փիլիսոփայական աշխատություններով մերկացրին մարքսիզմի ռևիզիայի բոլոր փորձերը, մերկացրին ռևիզիոնիստներին, լիկվիդատորներին, աստվածաշինարարներին ու աստված որոնողներին, մերկացրին

[1] Վ. Ի. ԼԵՆԻՆ, Երկեր, հատ. 14, էջ 455։

մախիզմը և նրա ռուսական ու կովկասյան հետևողներին, ապացուցեցին, որ նրանց ուղին իդեալիստական, տերտերականության ուղին է, որ իդեալիզմը բուրժուազիայի ավելի սպառազինված պարտիան է, ամեն տեսակի ռեակցիոն ուժերի իդեական զինանոցը պրոլետարիատի պարտիայի՝ մատերիալիզմի դեմ նրանց մղած պայքարում։

«Էմպիրիոկրիտիցիզմի գնոսեոլոգիական սխոլաստիկայի հետևում,— գրում էր Լենինը,— չի կարելի չտեսնել պարտիաների պայքարը փիլիսոփայության մեջ, մի պայքար, որ վերջին հաշվով արտահայտում է արդի հասարակության թշնամական դասակարգերի տենդենցներն ու իդեոլոգիան։ Նորագույն փիլիսոփայությունը նույնպես պարտիական է, ինչպես և երկու հազար տարի սրանից առաջ։ Ըստ բանի էության,— որը քողարկվում է գելերտերական-շառլատանական նոր մականուններով կամ թշվառամիտ անպարտիականությամբ,— պայքարող պարտիաները հանդիսանում են մատերիալիզմն ու իդեալիզմը»[1]։

[1] Վ. Ի. ԼԵՆԻՆ. Երկեր, հատ. 14, էջ 180։